թուական ընդունելու, որով Հայ թուականի ամենահին գործածութիւնը կունենանք։ Արձանագրութիւնը հետեւեալն է. ընդգծումները շատ աղօտ են կամ ենթադրութեամբ լրացած։

(Ե)ս Աբրահամ | վարդապետս շինե | ցի
զեկեղեցիս զայս ի թո | ւականութեան ՀԱ.»

5. Ներսեհ Կամսարականի *արձանագրութիւնը Թալինի խաչաձեւ մատրան արեւմտեան ճակատին,* է. դարու առաջին կիսում, *համանօրէն վեցհարիւր երեսնական թուականներին, բոլորաձեւ, խոշոր և գեղեցիկ երկաթագրով։ Արձանագրութիւնը պակասաւոր է մի քար ընկած լինելու պատճառով, որի վրայ քանդակուած էր նաև լուսամուտի գլխի զարնէզը։ Ներսեհ Կամսարականի անունը յիշւում է նաև Արամանի, Մրենի և Նախճաւանի եկեղեցիների արձանագրութիւնների մէջ։ Արամանի արձանագրութիւնը թուագրուած է, «Բսան եւ եւթն ամւոյ Հերակլի բարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակայ եւ Արշարունեաց . . » տ. և* Христ. Востокъ. Т. II. вып. I. СП. ***1913** եր. **131.*** *յօղուած* I. A.. Орбели *ի։ Փակագծերինը մեր յաւելումներն են, ընկած երկու քարի տեղը։*

+ Ես Ներսեհ ապոհւպատ պա(տրիկ Շի(ր)ակայ
եւ Աշարունեաց տէր շի |
նեցի զեկեղեցիս յանուն սրբ(ո)յ Աստուա-
ծածնին ի բարեխաւսու |
թիւն ինձ եւ Շուշանայ ամուսնոյ իմոյ
եւ | Հրահատայ որդւոյ մերոյ։ +

6. *Մրենի արձանագրութիւնը, տաճարի արեւմտեան պատի ճակատին, տարաբաղդաբար թերի նաև այն մասում, ուր թուագրութեանն է։ Հակառակ ընդհանրացած կարծիքի Մրենի տաճարի շինութիւնն ընդունում ենք կատարուած* վեց հարիւր երեսնական թուականների վերջերին, Դաւիթ Սահառունու Կուրապաղատութեան ժամանակ 638—640 թթ.ին (*Հմմ. և* Христ. Востокъ. Томъ II, выпускъ I. СП ***1913.** եր. **132**)։ Առաջին տող սկզբից և վերջից պակաս, իսկ վերջում փակագծի մէջ առնուածը, քարեր ընկած լինելու պատճառով։ Սկզբում թուագրութիւնն էր Հերակլի թագաւորութեան տարիներով։ Միւս լրացումները առաջին և երկրորդ տողերում պակաս են, լուսամուտի աջ կողմից մի քար ընկած լինելու պատճառով։*

Արձանագրութեան բնագիրն է.

1. . . . որդլի Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշ-
խանութե . . . (Դաւթի ա) մեծագոյ պատրկի Կու-
րապաղատի եւ սպարա(պետի Հա)